


## ՏՐԴԱՏ

ՔԵՐԹՈՒԱԾ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ :



Ա. Պ. Ա. Ր ՈՒ Ա. Ծ Գ.

Յեսարանն է մերը յԱշտիշտառ՝ ի Տարօն, և մերը՝ ի Բագուան՝ ի Ծաղկուտն գաւառի.

(Անուան, և 'ի խորս եռորա որմն ձարտարարուեստ և բրդուեց):

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԶԱՐԵՒՄ

Ծըփան դեռ ևս հանգոյն ծովու ալեգոլ (Ակատեղով՝ ի հեռաստանն) .

Աւանք, մեշեանք լըրիւ իւրեանց յամնյով.

Խառնի ի շէնս երաստ համուռ ճեպընթաց,

Աղմուկ՝ շըշուկ լընու զանտառն եղևնեաց :

Ճեպ տան ռամիկը և նախարարք ոստանիկ,

Իցէ վերջին օր կենցաղոյս տարաձիգ .

Մի թէ զերծեալ ի գրէ Գրիգոր խելագար

Ըստ առաջնոյնյուզէ զաշխարհ վեր ի վայր :

Արդեզ Տըրդատ իցէ նըմին թեարկու

Զի յանօրէն գործոց ըզնա չարգելու .

Եթէ այդպէս, դիք վրէժիսընդիր լինիցին,

Նոցին անկ է հոգալ ըզմեզ կաթողին :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՇԱԽԱՐԾ. ԶԱՐԵՀ. ԱՐՄԱՑԻՍ. ԱՐԶԱՆ

Շաշարշ (ուխտադրուժն զայ) :

Դէպք անըմբեր . գամմազապուրծ գուժաբեր  
թախիծ ոգւոյ քըրմապետիդ արկանել.

Ի հուռ ծախին բոցածաւալ սուրբ սեղանք,

Նըւէրք յերկիր կործանեցան, նոյն արձանք :

1 Տես Գ Պըակ, յէջ 205.

Կախարդ Գրիգոր անցեալի գլուխ բանակին  
 Զոխ իւր հանել աքսորանաց զայրագին .  
 Ճակատ հարեալ քուքան ընդ դիս մոգք անդէն ,  
 Հիասարսափ երագ երագ խուճապեն .  
 Զօրէն ալեաց կոհակ կոհակ տան հորդան  
 Դենակորոյգք գալ ի տեղիս իննակնեան .  
 Աճապարեալք՝ տացուք . . .

### Չարեն

Այ եղեռանց , առցեն ի կուշտ վէսք զաշտէ ,  
 Զայդ վոհմակ շանց իմըս բազուկ փեռեկէ .  
 Լաւ ինձ մընալ դարանասպաս ի փապար ,  
 Փուժմա ի զէն դու կազմընդ դաշտն ի պայքար :  
 Թէ դան ընդ կրուկն , անդ Արմայիս իմորդի  
 Գաղտագողի որս ըմբռանէ յուռկանի .  
 Մեռցուք , եթէ օրհասն իցէ հասեալ մօտ ,  
 Ընդ Գիսաննեայ վաղիւ անկցուք անյողդողդ :  
 Բան դայսոսիկ պատուիրեմ քեզ կանխատես  
 Զի առաջի կայ ելանել մեզ Ալէս :

### Շաշարլ

Վեր ի վայր շըրջեցաւ աշխարհիս լաւութիւն ,  
 Ուխտաւորք զանգիտեն գալ յաղերս Դիցուհւոյն :

### Չարեն

Դու օգնական կացչիր ընդ հուպ Արմայսին  
 Առ ամրակուռըն պատնիշաւ արտաքին .  
 Ընդ վայր նոքա ըզճիգն ի ճիգն խառնեացեն ,  
 Մեր յանդիման ոչ ծուժայ մարդ ապագէն :  
 Ողիմազ յառնէ ընդ մեզ խառնակ ի գուպար  
 Ըսպառազէն բիւրաւորօք օդավար ,  
 Բըռնամարտիկ բարեկամօք ընտանի  
 Խորտակեսցեն ըզբըռնութիւն հրոսակի :

### Շաշարլ

Հայցեմք ի դից հանապազօր թախծագին  
 Հաստել զիւրեանց խաղաղութեան հովանին :

Արմայիս (գայ) .

Գուժկան այսօր գայը հասանէր բօթաբեր  
Ժըպիրն ընթաց ուրացելոց ազդ. առնէր .  
Վըտանգ, գոչէր . բանին չէի իրազգած ,  
Անդուստ Տարօն լըցաւ զօրու թըշնամեաց :  
Զօձիս ցեղոյր ցուցեալ զվըտանգ մօտալուտ ,  
Ընդ այն խոհերս բորբոքէին ի զայրոյթ ,  
Երդուեալ հաստատ չըկըհատիլ ի մարտէն՝  
Թէպէտ հազարք աստուածամարտք յարիցեն :  
Անդ ուրացեալք մեծաբանեն ընդունայն  
Մոխրելըզէնս աստուածագահ սըրբութեան ,  
Գերել գերփել, ըզվոյր թողուլ ամայի ,  
Ի հուր դատել և ըզբազինս նըւիրի :  
Ի գաւառին դաշնակիցք մեր խըմբովին  
Ի գունդ նոցին աւազակաց գիմեցին ,  
Պատահեցան սըրտմըտութեամբ 'ի հարուած ,  
Մարտն էր ահեղ, հող ներկանէր կարմիրազգեաց :  
Զերեք ժամաւ ամբաւ մահունք կուտեցան .  
Զորս էր ուրեմն՝ ընկըրկեցան հրոպ ի վրան .  
Եւ այժմ առեալ զայլ նըս զօրս ընդ իւրեանս  
Զազիրք պըրդէն նըւիրական ըզսահմանս :  
Եւ մեղ հարկ է զնոսին ի գայթ արկանել,  
Թողլ յաւելցեն . . . (գայ վաշտն) :

Զարեն

Լաւ է խորհուրդդ, աղնիւ որդեակ ,  
Քեզ ի թիկունս կարդամ զլահագն :

Հաւարշ

Ի մացառուտն անդ ի վէգ գալ կէս ընդ կէս ,  
Թէպէտ է վտանգ երկուց կողմանց մեծապէս .  
Այլ մեզ քաջացըս խաղք են կոիւք հաւաստեաւ ,  
Դահճապետիս չազդէ ի սիրտ ահ բընաւ :

Արձան

Մուր սատակումն ընթանայ բուն առաջի :

Արմայիս

Ահեղիցն է վրէժ բաղկի :

Զարեհ

Խըրատեսցին պաշտել ըղթիս հայրենի : (Երբայ) :

Շաշարչ

Անձն ուրացող լսպանցի :

Արմայիս

Ի շոխնդ ահեղ քուրմք ի գիւղից քաղաքաց  
Զինաւորեալք յառնեն ընդդէմ Գրիգորեանց .  
Անդ ճապաղիքըն խաղացեն խոխոջմամբ :

Արձան

Ըզյաղթանակ վեհից տանել քաջապանծ  
Քուրմք դաշնակիցք յառնեն ընդդէմ Գրիգորեանց .  
Անդ ճապաղիքըն խաղացեն խոխոջմամբ :

### ԷՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՐՄԱՑԻՍ, ԲԱԲԿԵՆ, ԱՐՉԱՆ, ՎԱՀՐԱՄ, ՍՄԻԱՏ, ՇԱՒԱՄՇ, ԳՐԻԳՈՐ, ՎԱՇՏՆ

Արմայիս . (հասանե բանակն աղմկաւ) :

Արիք , գօրականք , եհաս թըշնամին ,  
Արիք , ըղնոսա ջարդել զայրագին : (Ճակատին բանակք) :

Բարկեն

Յինչ վըստահ դիմագրաւ խիզախէք յանդըգունք ,  
Զի ի զուր հայթհայթին քըրտնաջան այդ ճըգունք .  
Գիտիցէք զի սեղանք զաղութեան քակեացին ,  
Զոհք նոցա և հանդէաք պղղծութիւն է յետին :  
Փորձ փորձել միւսանգամմ մարդոյ է անխոհեմ ,  
Երբ պատգամ Անմահին կայ անշարժ իբր ըղվէմ .

Յուսացեալ ձեր ի դիս ցանկայիք յաղթութեան ,  
բայց նոքա յաշըս մեր են ձուլած անկենդան :  
Օ՞ն , անկցին արդ տաճարդ ապաստան վատազգեաց  
եւ կուապաշտ բընակիչք լինիցին արտալած :

### Արմայիս

Անձրեանման սըլաքք և տէզք տեղասցի  
Թատի ի տախտակ կըրծոց , փորոց , շեշտակի .  
Հարվիք ի սիրտ կարծեալ կենօք չըւառի ,  
Այս բաժին ձեր , վարձատրութիւն արժանի :  
Հէք արարածդ եղն ըստրուկ և գերի ,  
ի մի նըշմար Դիմայ՝ ի հող լուծանի .  
Հիմ թիկնադարձ խըրոխտ սաստիւ կատաղի  
Մարտիւ երկնից հարկանիք դուք ի դիմի :  
Հրաւէր կարդաչք վըրէժիսընդիր դից բըոնի  
Ըզբարկութիւն իւրեանց հեղուլ սոսկալի .  
Գահավիժեալ ի տարտարոս գեհենի  
Սուտակասպասն՝ անդ հրատոչոր պատժեսցի :

### Արձան

Թէ այր իցես , իշխանդ արանց , Անգեղ տան ,  
ինձ պատահեա հրաշունչ ոգւով քաջութեան .  
Ով տիրադրուժ , ուժես ընդդէմ Գիսանեայ ,  
կասեաց , աղէ , ազգատոհմիդ խընայեա :  
Ընդ ծամելիս քո տէդ շամիրեմ քինախանձ ,  
Ըզբեղ անգեղք գիշատեսցեն օդագնացք :  
(Արկանէ զնիզակն և վրիպի) :

### Վահրամ

Ընդ մեզ , Արձան , մենամարտիլ թէ խընդրես ,  
Յայդըմ տեղւով արձանանալ պիտի քեզ .  
Մի վատազգեոյդ ձեռք մըխեսցին ի պատեան ,  
Գայ կենախուզ տէդ քեզ վարսել աղեղան :  
Ինքըն չարաց մըշտապաշտոն հետազօտ  
Օձապըտոյտ երթեեկէ անծանօթ .  
Այժմիկ և քեզ յայտնէ լանջացն ըզկորով  
Որպէս մաշեաց սուսերահար զազդ յոլով :  
Կացցես անշարժ կոթողեալ . . . (Հարեալ տապալէ զնա) :

**Սմբատ (առ Շաշարյ) .**

Ով անոպայ դայլ պատառող սուրբ ուխտին ,  
 Առ ինչ գըրժեալ հակառակիս մեզ ուժգին .  
 Խուսափեցէք յերկնից գըրեալ կորովեաց  
 Որ արևացդ ածեն մահունս սևազգեաց .  
 Մեք առաքեալք եւք յարքայէն փութապէս  
 Ըզպըդժութիւն ձեր խափանել չարածէս :

**Շաշարյ**

Պապանձեաց դու , անօրէն , քեզ զի՞ լուսալ .  
 Փըքոցուոյց ըսպարապետ , յուշի կալ .  
 Կարկեսջիր , բանքդ այլանդակք չեն պիտոյ մեզ ,  
 Յօժար կամօք զանձն իմ ընդ դիս դընեմ ես .  
 Պողոպատիկըս փայլուն քեզ ըսպառնայ ,  
 Ի սիրտդ ահա խըրեմ զերկաթս այս դընեայ : (Եոցէ զնա)

**Սմբատ**

Անկցիս տապաստ , տեսցեն քոյինք ի բացէ ,  
 Գիտասցեն թէ Սմբատ ըզքեզ փողոտէ .  
 Ահաւասիկ Աստուածն հըզօր Գրիգորայ  
 Օդնեաց բազիս ջընջել ըղձեզ անխընայ :  
 Վաշ զօրութեանդ անարի  
 Որ խիզախես մեկուսի  
 Վանել ըզմեզի խազմի : (Տապալէ զնա)

**Արմայիս**

Օն մարտիս տամբք վերջ՝ բընակիչք տաճարին  
 Արագ արագ դըռոյթ տըւեալ մոլեգին ,  
 Բուռն ի վերայ նոցին տըւեալ յարձակուրդ  
 Կոտորեամիք զովկոյն բանակդ անյաղուրդ :

**Բարկեն**

Ըզվաղակաւորն իմ յախոնդիս քո միսեմ ,  
 Զարեան քամեսցէ ըզշիթ յերմաջերմ .  
 Մանիցես ըզմեզի ժամ անազան  
 Խեռ . և ըստամբակ Աբմայս՝ ի մահուան : (Արդեշեալ լինի)

Արմայիս

Ուր քաջութիւն վաշտին մերոյ , և որ երթայք .  
Պարտութիւն . . .

Վահրամ

Հանդարտեսցին գանդիւնք գանչիւնք վայրապար ,  
Զայնք՝ աղաղակք ոչ տան զործոյն ըզվըճար :  
Մարդոյ զարժանն հարկ է խընդրել միամիտ  
Եւ մի անձին վնասու լինել գամաղիտ :  
Ելնչ դուք պանծայք , ճշշմարտութեան անարդուք ,  
Կամ ոյք ոմանք յաստիս իցեն ձեղիւկունք .  
Ամբարըշտաց հանդերձեալ են տուգանք բիւրք ,  
Ում արդ մընայք , եհաս դրիգոր , փախերոնք :

Գրիգոր

Զինչ այդ շաշիւն զինուց կոփիւն և գանչիւն ,  
Յոխորտ գընդին բոցամոյի խիղախիւն .  
Վարեալ սուրայք ընդդէմ խաշին յերիվար ,  
Ընկճեցարուք , կըուապարիշտք խելագար : (Առնե զնշան խաչի) :  
Ալացեալ յերկնից ամպահարկ զայ դատաւոր ,  
Յաւիտենից Տէր զօրութեանցն ահաւոր ,  
Ըզձեզ շոպեալ ջորորեսցէ իյըստուեր  
Նըսեմափակ ի տուն սորել դառնավէր :  
Շութափ տեղիքս գոյն քըրքմագոյն շըպարին ,  
Լըպիրշ ջոկատ տարամերժի խըմբովին : (Հալածին) :

Վաշտն

Շաքել ըզձեզ զերդ սաղարթուց ըզթօթափ  
Վերագառնամք առ մեծ արքայն ճեպըշտապ ,  
Նա վրէժիւընդիր քէն պահանջէ մահահոտ ,  
Դասնան ի ցաւս ձեր քիրտն և ջան թափառուտ :

Գրիգոր

Խարխալեսցին հիմնայատակ ապարանք ,  
Դեք ուրուականք աստի լիցին ըշկօթակ ,  
Ուր հանգըստեան տաճար սըրբոց հիմնեսցի

Հանապաղորդ բարեխօսել աշխարհի :  
Զի Հայաստան իւրովք սըրբովք ճոխապանծ  
Դարուց ի գարս ըզմնաւս ածցէ ի նախանձ :

Սմբատ

Առ ի պատիւ Բարձրելց Տեառըն զօրութեանց :

Գրիգոր

Ելցեն , աղէ , աւետաւորք առ արքայն  
Մինչև ըզդործ աւարտեալ մեր շինութեան .  
Թէ նըւիրաց նորին Տէր է ընկալուչ  
Ժամանեացեն մաղթանք յերկինս սըրտառուչ : (Երրան)

ՏԵՍԱՐԱՆ Դ .

ՏՐԴԱՏ

Տրդատ (գայ , 'ի քաց ձգեալ զխողենին) :

Որպիսի փոխարէն որպիսի տիպ ցասման  
Յարարչին ձեռանէ ի մեզ գայ երեան .  
Աւաղ ինձ եղկելոյս , յանհամբոյր յայս կենցաղ  
Անձնամատն երթիցեմ կորրստեան ի գագաղ .  
Չըթողի պակաս ինչ ի տանջել ըզդրիգոր ,  
Զի տեսիլ նորաստեղծ էր հնարեալ անդանօր .  
Իշխեցի հայհոյել և' ի տըռփանս գեղերել ,  
Թաթաւեալ ձեռքս յարիւն Հոփիփափմեայ մաքրասէր .  
Վըիժապարտ փոխեցայ 'ի դիմակ անբանից  
Եւ վարք իմը ընդ նոսին թըռեցաւ պըղծալից .  
Լուտանաց շատ տարայ եղերանցս ըստ չափու  
Զի սըրբոցն ըսպանման ես եղէ մատընտու :  
Օգտեցայ և ոյինչ ի փառաց աթոռոյս ,  
Ի փառաց՝ որ զարմիս է պատիւ ընդաբոյս .  
Զիս սարսափք՝ խիղճ մըտացս յարաժամ տագնապեն ,  
Ռւր գրիգոր գեղատու բըժըշկել զիս աստէն :  
Ե՛րբ արդեզք եկեալ զիս արասցէ քրիստոնեայ ,  
Յայն կրօն սուրբ որոյ գլուխն է Աստուած աներկրայ .  
Այլ իցէ ինձ հընար հաշտ լինել ընդ վերնոյն ,  
Բաւ ի նա խրոխտացայ , չարութիւնքս են անհուն :

Հերիք, գըթաւ, Տէր, հերիք . քեզ ժըպրհալիր  
 Գործեցի հակառակ բարութեանց Երկնաձիր .  
 Զի յօդեալ սերտ սըրտիւ ընդ այսոց յարատանդ  
 Մոլորեալ մոլեցայ, որով սիրտս հան թառանչ .  
 Ըզմէ, Տէր, լըքեալ զիս թողուս հէքս աղեկէզ  
 Խօլական 'ի մըռայլս խորհըրդոց և անտես .  
 Մի, Աստուած, հիւծելցյս հատուցես անդ ըզբոցն .  
 Միթէ շնս դու զըրկող զիմողաց առ. քո ծոց :  
 Դու ինքնին բարութիւն անըսկիզբն և միշտ է,  
 Խորհըրդով անկընին զիս ածէր յոչլնչէ,  
 Տըւեալխելս կառավար և պարգևս անհամար,  
 Պատուիրեալ սանձել զանձն երբ միտի զէպ ի չար .  
 Ես անփոյթ կուտեցի շեղաշեղջ ըզչարիս,  
 Այսք ճիւադք ի խորոց ճեպ ետուն գօշել զիս .  
 Զարդիս լեալ քաջ ակահ ես դենից սըտութեան  
 Ընդ վրնասն հատուցից որք քեզ, Տէր, բարդեցան,  
 Քաւեան զիս բազմամեղս, բազմագութ թագաւոր,  
 Թողութիւն շընորհեա քաւութեան կարեոր,  
 Զի արագ. ի ցաւոց ըըժժկեալ դառնադէտ  
 Քեզ ըսպաս հարից լոկ, պաղատիմ զայս ևեթ .  
 Եթէ իմ անարժան հանդիպել շընորհաց  
 Վասն այն Տէր Միածին զինքն ի խաչ բնեռեաց,  
 Զի տացէ մուտ ի կեանս մասնելցն ի գեհեն,  
 Յարուցեալ զազդ մարդկան ազատեաց ի բանտէն .

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԶԱՐԵՆ, ՏՐԴԱՏ, ՎԱՇՏՆ

Զարեն (հասեալ ընդ վաշտուն) :

Վրէժ, հատուցումն, արքայ, խընդրեմ, խընդրեմ այսօր խուճարեկ  
 Վահեվահեան ի տաճարաց զաջ խորտակել չարանենդ,  
 Ուր մոլին՝ վատշըւէր  
 Տայ Գրիգոր յուղել հեռ .  
 Հիրար խիզախ ընդ քուրմն այսպէս վարեալ ի քէն նախանձու.  
 Ի պաշտամանց արտահանէ, վիրօք հարեալ մահացու,  
 Հաստուտել քըրտնաթոր  
 Սուրբ տեղեաց օրէնս նոր .

Ցանկանալով զայլ ճապաղիս հեղուլ արեան այս յիմար ,  
Զամբոխ բազում ի զլուխ կուտէ կապտել ըզմեղ անպատկառ .  
Մինչև ցերք շընչասպառ  
Կացցուք մեք արհամարհ :

Յուշլիցին քեզ պատգամք գըրոց , մի խընայերյայր դըժնեայ .  
Բարձցին յերկրէ շունքը կախարդաց և քրիստոնեայն խարեբայ .  
Պաղատիմ լալախառն  
Աւարտեալ զիմբարբառ :

### Տրդառ

Իրբե ըզսատան սըպըրդեալ անդրէն յանդըգնիս նորոդ ,  
Անգութ ոճրադործ , նենգել մեղըզրաւ , սըտապատիր մոդ .  
Ուշիմլէր , ոչ դու ինքն առիթ ծանու վասառուն եղեր մեզ ,  
Դու ծանրացուցեր ըզձեռն լինմահին ի հարուած պէսպէս :  
Ձի ավըտամբեալ ի սուրբ հաւատոյ ըզժողովուրդ մեր ,  
Փայտից և քարանց յունայն պաշտամունս զու հրաւիրեցեր .  
Դու ըզլուծն ի բաց ընկեցեր ի մէնջ էին հրամանին  
Եւ յարմարեցեր՝ կեղծեալ ըզթիւրն ընդ ճըշմարիտ ուզի :  
Անդ երկիրն չայոց ապականեցաւ յանօրէնութեան  
Որ երբեմն անաղտ վերին սըրբութեան էր բընակարան .  
Ցարդ անձամբ ամբաւ կորըստեան մահու մեղսառիթ եղեալ  
Եւ անդրադարձեալ ի զահ իմմատչիս բանիւ այլեայլ :  
Գնա ստի ի բաց , առեալ զվաշտդ ընդ քեզ . . .

### Վաշտն

Ձէ արժան քեզ , ով տէր , անիրաւ դատաստան  
Որ նըստիս թագաւոր ի գահոյս ուղղութեան .  
Մի ըզմեղ արտաքսեր , խարեալ գոս վայրապար ,  
Թէ իսպառ մերժեսցես հարուածեալ չարաչար :  
Պոսակիւն ծըփասցի չայաստան թունդ ի թունդ ,  
Զարմ Պարմե գըլիսակոր գլորեսցին խոր յանդունդ .  
Ճնշեսցին կենդանիք ժանտախտիւ դիտապաստ ,  
Պատգամացս է վըկայ ինքին մեծն Արամազդ : (Գայ Օտայ) :

### Տրդառ

Կորիր , ով ծերըդ դառնացեալ , Եւ յատենէս աստ , մի կար .  
Կորիք և դուք նորին վարձկանք , մի բարբանջէք ընդ երկար ,  
Շոյտ ի փախուստ փութասիիք , ոչ ևս է ձեզ ոք ունկընդիր ,  
Մէ իշխեսվիք ըզստութիւն ձեր քարողել տարագիր : (Երբան) :

Օտայ

Աղէ , ով դուք , ըսթափեսչիք Քրիստոսիւ ,  
Գոլ երջանիկ վերակոչեալի պատիւ :

Տրդատ

**Հետևեցայ մոլորելոց և կըրից**  
 Ընկըզմելով ի չար հաճոյս քաղցուալից .  
 Են փոխարէն այս պատուհասք բարկութեան ,  
 Ցասեաւ Աստուած անըզամիս անպայման :  
**Հասու գոլով սըրոտիս , հոգւոյս խորհըրդոց**  
 Արդարապէս համակեցոյց ի բիւր կոծ .  
 Մի ի չարիս մարդն անօրէն պարծեսցի ,  
 Ամենազէտ Աստուած՝ երբէք ոչ խարի :

ՏԵՍԱԲԱՆ Զ.

ՕՏԱՅ ՏՐԴԱՏ

Օտայ

Անկարեկիր ընդ քո տեսիլդ Հայաստան  
 Ողբալ ողբան ազդք և ազինք ամենայն .  
 Յիսուս Քրիստոս գատէ ըզքեզ ընդ երկայն  
 Ի վրէմ փոխան անպարտ արեանց քաւութեան :  
**Մերկ ի փառաց՝ յետին շընչոյդ մընացուած**  
 Ո՞հ , քանի ցաւ և սուզ առթէ արտասուաց .  
 Եղուկ , զելու սիրտ իմ ընդ քո հեծութիւն ,  
 Աւաղ գոչէ , բազկիս պաղեալ կայ արիւն :  
 Բաւ է , հերկիք . յուսա լԱստուած կենդանի ,  
 Դադարեսցեն արկածք մահու սոսկալի .  
 Զիջին անձինք ողջ ողջ ի հող դամբանի ,  
 Մըրբեալ արդ զաշը զըդջալով առ հոգի :

Տրդատ

Գան զերեսօք ինձ հարկանին կըշտամբանք .  
 Սուտ են բազինք , վայրք պըզծութեան այդ մեհեանք .  
 Անմըտութեամբ պաշտի զանդուածն անկենդան  
 Զորըս ծընան քըրմացն հընարք դանաղան :

Փառաց պարծանկք՝ են գըստովանք ինձ յետին ,  
Որք յետ ժամու յոչընչովթինն պատանդին .  
Իցէ ուրեք մարդ ոք քան զիս ապիրատ  
Որ յեղեռունս յաճախեսցէ անձնամատն :  
Ըստ արժանեաց իմոց նորին ուրուակերպ  
Գան ի տեսիլ զիս վըրդովիլ յերաշխէպ ,  
Եւ ըզվըտակ առատարուզիս արտասուաց  
Հեղուն զեղուն յականողեաց վըշտազգեաց ,  
Իրրու թըշուառ յոգւոց պարզեալ ապաստան  
Մաշեալ սիրտ իմ , յորդորք նորին քակեցան .  
Սակայն դեռ ևս յիս յուսոյ իմն արդասիք  
Ակընկալէ զի լինիցիմերջանիկ ,

### ՏԵՌԱՐԱՆ Է .

ՏԱԶԱՏ . ՏՐԴԱՏ

#### Տաձատ (գալով) :

Աւետեօք ցընծութեան փութամ աստ , ով արքայ ,  
Զի ընդ հուպ լուսատուն յետս առ մեղ զայ գառնայ .  
Առաքեալ իսկ հրեշտակք հըսչակեն ի բագուան ,  
Ռւնելով շուրջ զիւրե ըզժողով բաղմութեան :  
Զատրուշանս խարուկեալ կործանէ բոցազգեաց  
Նըշանաւ սուրբ խաչին և Ցերամք զօրութեանց .  
Նա բարձեալ ըզնըշխարտ իսկ սըրբոց երկոցուն ,  
Ի նոցունց զօրութինն սանդարաց կայ նըկուն :  
Ի կուտանց խումբ քըրմաց՝ քըրմուհեաց վատազզի  
Ի փախուստ թաքըստեան փութացան առ ահի :

#### ՏՐԴԱՏ

Որ ի բարձունս յափառենից քաղցր Աստուած  
Հայր բարեխնամ հողածընունդ զաւակաց ,  
Մեղաւորին դու զոլ քաւիլ ըղձանաս ,  
Երկայնամիտ անտես առնես պատուհաս :  
Աղջաւոր քեզ պաղատիմ , լուր ինձ , Տէր ,  
Յիշատակաւ առատ գըթոյդ բարեսէր .  
Խնայեա բարձեալ մեղապարտիս մոլեզին  
Էնդ սիրելի ժողովըրդեանս հայկածին :

Հայեաց ընդ ազգն իմ որ հնազանդ քո բանին  
Ողոքաւոր մեղայ գոչէ քեզ յերկին .  
Որպէս զի ձեռն պատոփրանի վերըստին  
Ըզքեզ ժառանդ մեզ ըստացուք ի բաժին :  
Փառատրութիւնս երգեցից քեզ յաւիտեան  
Որ հաշտ ակամիք ստացար ըզմեղ աստ համայն .  
Այս բարեզք քովք ըզմիտ հիքին անվախճան ,  
Օրհնեալ է քո յիմ վերայ տուրք գըթութեան :

### ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԱՐՏԱԽԱՉՅԻ, ՕՏԱՑ, ՏՐԴԱՏ, ՏԱԶԱՏ

### Արտաշազդ (գայ) .

Առցէ հանգիստ խաղաղական աշխարհս համայն  
Մինչ ի պաշտօն մատիւքը ուխտիւք միակ Արարչին .  
Մահաբերին բարձի ահեղ մարտ ոխութեան ,  
Ծաղկեալ ալեզք լերինք Մասեաց զարդարեացին :  
Զի յաղթական եկաւորէ այսըլը Գրիգոր ,  
Կից ընդ նըմին և պաշտօնեաք Յոնաց բընիկ  
Խուռըն դիմեն յաջոյն համբոյը և ի շընորհ  
Լուսաւորչին Հայաստանեայց հօր երջանիկ :

### Օտայ

Շող կենսատուր ի Հայաստան  
Մաւալեսցի ընդհանուր ,  
Յամս ամանոր մեր փըրկութեան  
Կացուրդեսցէ այր անցնիւր :

### Տրդատ

Հայոց մանկունք , երամ երամ մատիք ի թե իշնդութեան ,  
Յոստ անթառամ պըսակելով ի գալըստեան Գրիգորին .  
Հընեցուցէք ըզշեփորայս ներդաշնակս յերգս յաղթական ,  
Օր է և ժամ՝ուրախութեան՝ յիշատակաց արժանի :

### Տաձատ

Ըստ ակնարկութեան քոյին հրամանի  
Ելցուք ընդ առաջ սուրբ հայրապետի  
Երգօք և պարուք . . . (գայ Գրիգոր ընդ Սմբատայ) :

### ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՏՐԴԱՏ, ԳՐԻԳՈՐ, ՏԱՅԱՏ, ԱՐՏԱՒՐՁԻ, ՍՄԲԱՏ

### Տրդատ

Ճնորհազարդ սուրբ աշոյդ, և արթուն հօտապետ,  
Ի գլուխ մեր հանգիցէ օրհնութիւն երկնածիր .  
Թանմահէն կարգեցար առաջնորդ դու յաւէտ,  
Գըթացեալ դարման տար հիւծելոցս ախտակիր :

Գրիգոր

Յաւերժմական ցող օրհնութեան հրահոսան,  
Գութ և շնորհ ամենակալ զօրութեան  
Լուսաւորեալ ուղղեցէ զմիտս ի բարին,  
Զի ապրեսջիք անդին արեամբ թիսուսին :

### Տաձատ

Ապաշաւեալ ամենեքին դառըն կոծով  
Ըսթափեցաք՝ ակըն կալեալ քեզ ապահով.  
Կաց հաշտարար ընդ արարիչն և ընդ արարած  
Լըծել զողորմ նորին նոդ աղերս մեր անձկայրեաց :

### Այտաշագդ

Յաղերս անկեալ քո առաջի  
Զերմ արտասուք յաշաց հոսի .  
Ներեա, ով հայր, մեր յանցանաց  
Զի քեզ մեղաք աներկիւղած :  
Քեզ անձինք մեր երախտապարտ  
Ռւկսան յօժար լինել հնազանդ .  
Թախանձանօք եմք ի խընդիր,  
Զաղէտս ի մէնջ փարատեսջիր :

Գրիգոր

**Ժողովեալըզնըշխարս մարտիրոս սուրբ կուսից  
Որք ի սէր մաքրութեան ըսպանան ի թախիծա ,  
Առ նոցուն պաշտամունս սուրբ խորանք կառուցին ,  
Ռւրանօր ի տեսլեան լուսասփիւռ էջ Միածին :**

Տրդատ

**Քանիցա երկնից արդարութեան ըզփորձ առի ,  
Ահաւոր է և պատուհասն կայ առ երի .  
Անքըննելի է դատաւորն և դատաստան ,  
Դատէ զաշխարհ և զեղականքս ի մի վայրկեան :**

Սմբատ

**Քրիստոս Աստուած արդարութեան  
Դատէ զաշխարհ ի մի վայրկեան :**

Գրիգոր

**Աստ դատեսցի ամենակալն  
Զանց առնելով ըզհանդերձեալն :**

Տրդատ

**Տըւայտիմ դեռ ևս  
Ի տագնապս պէսպէս .  
Խսպառ զիս սըրբեա՝  
Լինել երախայ :  
Յիմանձին մընան  
Հետք անբանական ,  
Դըժպըհի մարդկան  
Այս տիպ ծաղրական :  
Մեղայ գըլլառպին  
Առաջի Երկնին .  
Ամօթ և նախառ  
Մընան յիմ ճակատ :  
Առաջի քոյին  
Խընդրեմթախծագին ,  
Դարձն զիս կըրկին  
Ի կերպ մարդկային :**

Գրիգոր

Դաւանեցան ըզքեղ Աստուած ,  
 Եւ դեք եղեն արտահալած .  
 Յիսուս Միածին , էջ առ սոսա ,  
 Առողջացն յախտից դըմնեայ :  
 Բըժիշկ հոգւոց , որ ի խընդիր  
 Մոլորելց յաշխարհ եկիր ,  
 Եւ զախտամէտըս բուժեցեր  
 Ըզքուշութեան տըւեալ պատուէր :  
 Ըստանչենք և արուեստիւք  
 Ըզքո սուրբ կրօն եղեր նեցուկ .  
 Ըզքը կորըստեան անբան պատկեր  
 Դարձո՞ ի բուն , ով մարդասէր :

Տրդատ

Թէպէտ Ցէր ետես յերկնից զիմ մորմոք ,  
 Ճաւ տարապայման եթող յիս հոգովք .  
 Անուրջք կորըստեան անխուսափելի ,  
 Տագնապեն զանձն իմ , հարեալ շըփոթի :

Արտաշագդ

Թըշուառացելոյս չէր ածեալ զմբտաւ  
 Թէ ընթացք կենացս էին անիրաւ ,  
 Մինչև զայնոսիկ ողբալ անդադար  
 Ազդ յերկնից արար Աստուած բարերար :

Գրիգոր

Մինչև լուացեալ յաւազանին հաւատոյ  
 Շընորհաք սուրբ երրորդութեան համագոյ ,  
 Արկեալ զանձամբ ըզպատմուճան մաքրութեան ,  
 Տաճարք կըուց մի մընասցեն ի հիման :  
 Օ՞ն անդք հեռի պըղծութիւնք սուտ պաշտաման ,  
 Ի բաց ձերում յաշխարհէ ծէս դիւական .  
 Այր կռապարիշտ ոչ ժառանդէ ըզդըրախտ ,  
 Եւ ոչ նա՛ որ սիրոյ Տեառն է ապերախտ :

Զայս փողն հընչէ ջարսոնեան յիւր քարտիղի  
Զնշահաւատոք շեն Քրիստոսին արժանի .  
Գիտելով զայս , բարձցուք յերկրէ զանուն դից  
Եւ զորոշեալ հանդէս նոցին պըղծալից :  
Հապա , ելք խանձելի բոց ճարճատիչ . . . (մտանեն ի մեհեան) :

### ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՏՐԴԱՏ . ԳՐԻԳՈՐ . ԲԱՆԱԿՆ

Տրդատ (առ Կոհով մուզայ) :

Հյակապ տաճարիս յերազմոյն տափ վայրաց  
Թաղթական պըսակին քուրմիք և գասք քըրմուհեաց .  
Աստ հանդիստ գըպութեան կըղիովեան դըլխոյին ,  
Զոր օրհնեն երաստիք անըրջոց գիշերի ,  
Փողփողի յանդիման իբրև լյոյ գերարդի ,  
Ի պատուի ճոխացեալ պատկեր իւր զազոռատի : (Խորտակէ) :

Գրիգոր

Ի չիք դարձեալ պայծառասցի  
Ընդ յաջողուած իւրոյ բազդի : (Երբան առ Անահիտ) :

### Տրդատ

Աստ հըրճուէր Անահիտ վարդամատն Դիցուհի  
Երբ ըզնա կարդացաք պաշտպան մեր աշխարհի .  
Տօնք էին աւետեաց և կացուրդ բերկրանաց ,  
Յորելեան վարդավառ նըւիրօք գերազանց :  
Ի պատիւ երեսաց հըռչակեալ մեծաշուք  
Զերջանիկ տարեդարձ երգէին գիներբուք : (Խորտակեալ փշրէ) :

Գրիգոր

Է Մարիամ մայր Յիսուսի  
Դըլխոյ երկրիդ և թագուհի : (Երբան առ Բարշամ) :

### Տրդատ

Վերամբարձ ի դիտակ սա Բարշամ ասորի ,  
Սըմա յարգ՝ կըբկնեն ծունկըս բնակիչք մեր երկրի ,

Նըւագաւ ծընծղայից և փողոց գալարուն ,  
Մարտադիլք երդմնակուռ զախն հայցեն յօդնութիւն .  
Ըսպիտակ յոյը ցըլուց յողջակէզ նոխազու  
Մեծարեալ գեցյարդեն ըստ աւուր շաբաթու : (Փշրէ և զայն) :

Գրիգոր

Բարշամինեայ նըկար արծաթի  
Փոշոյ գունակ ընդ օդ ցըրուեսցի : (Երբան առ Հեփեստոս) :

Տրդատ

Որ նըստի հըրաշեայ առ սալօք ուռնըբարձ .  
Ի տեսիլ սեւադէմ Հեփեստոս հայր դարբնաց ,  
Զի դարբնէ ի յերկին ըզշանթիս հրատեղաց ,  
Ըզդործին մարտացու երկնայնոց մըրցանաց .  
Ումըզբոց վառ ի վառ նըւիրեն խարուկաց  
Զի հըրոյ արարիչ անուանի ի ոամկաց : (Փշրէ և զայն) :

Գրիգոր

Հըրովլ լուծցի նորին արձան ,  
Մի մընացէ մեր յանդիման : (Երբան առ Արամազդ) :

Տրդատ

Նըմանեալ փայլական ի ծոցոյ ամպրոպաց  
Ռստուցեալ ահընկէց լյոս ցայտէ ի կազմած .  
Կոչի հայր աստուածոց և ազդի մարդկութեան ,  
Անուն իւր Արամազդ , Դիս , Զես , բազմազան :  
Հաւատան թէ ի բռին է համայն ըստեղծուած ,  
Նա յայերն անդուլ տայ ըզըլընանս տստեղաց .  
Հայք ըզնա կարգեցին շահապետ մութ շիրմաց ,  
Բեկ զոսկերս տրքայից պահպանել յըղձութեանց : (Փշրէ և զայն) :

Գրիգոր

Գայթակլութեան և սայթակման  
Հալածեսցին առիթք համայն : (Գան ի միջի) :

Տրդատ

Այս , ուխտեցի զբագինս ամենայն  
Սոյն գունակ քանդել յերկիր Հայատան :

**Գրիգոր**

Բարձրեալն հաճի ծագել ըզլոյս սուրբ Հոգւոյն ,  
 Այլ յուշ ածէք զապաշխարանս դարձելոյն .  
 Օրէնք վերին մեղ կընքեցին զայս անդարձ  
 Սըրտիւ՝ շըրթամբ , նոյնպէս գործով գալի հայց :  
 Յիսուս Քրիստոս գիրկ տարածէ հանդըստեան  
 Երբ մեղաւորն հիւանդ հայցէ ըզդարման ,  
 Հստըրջացեալ իւր գընացից ի սըրտէ  
 ի թիկունս իւր առեալ ըզսուրբս աղաչէ :  
 Վեցեակ տասանց աւուրբ որ ցարդ տըւան ձեզ ,  
 Յորըս զանձինս հրահանդեցիք մեծապէս .  
 Եւյետ պահոց եկեալ գասուք յԵփրատ գետ ,  
 Մըկըրտեսջիք մեղաց թողեալ զարահետ :  
 Զի դրախտն Աղին բըռնաբարի ի բազկաց  
 Եւ բըռունք քաջք ըզնա բանան մեծապանծ .  
 Մըրուքք , Քերուքք պահնորդք դրախտին ըզդուշեաւ  
 Բոցեղէն սրովլ ընդդէմ մարդոյ ունին դրաւ :  
 Եթէ բաղսմոնքն իցեն յաւերժ բազմակոծ ,  
 Մուտ յարդարեն մեղաւորաց դարձելոց :  
 Զայս աւանդեալ բանիցս առնեմ կատարած ,  
 Խելաբերեալ ըզգոյշ կացէք օրինաց :

**Տրդատ**

Յանձն առնումք խընդութեամբ , հայրապետ սըրբազան ,  
 Զոր ինչ զու խօսեցար կատարել անյապաղ .  
 Փոխանակ հըրճուանաց լիցին զլուխք մոխրացան  
 Ընդ խորտիկն երկլուսնեայ կերիցուք հաց ու աղ : (Ի ճունկու) :

**Բանակն**

Ի գունս անկեալ լամք ողբաձայն , հայր բարեգութ ,  
 Ախտացելոցս առողջութիւն տուր մօտալուտ  
 Հաշտեալ ընդ մեղ՝ զի ես փրկիչ մեղաւորաց ,  
 Տուն Հայկայ քո ժողովուրդ , զու նոցին Աստուած .  
 Խոնարհեցմ մեղ զունկըն քո ,  
 Քեզ խընդուածքս լիցին հանոյ :

**Տրդատ**

Պաշտեսցէ արդ ըքքեղ Յարեթայ շառափիղ  
 Լքքելով մեկուսի ըզնախկին իւր շաւիղ .

Բանից քոց մի լիցին անսաստեալ ոտընհար  
Պահեցող օրինաց Տեսուն ազդն իմապիկար : (Երբան) :

Գրիգոր

Աստուած մեծ և հըզօր, զանհընարս իսկապէս  
Զօրութեամբ ի չըգոյն ի գոյակ զու շըրջես .  
Զազդ վայրագ, մարտադաւ, ըղճամբար խրոխտարան  
Յաշակերտ ըստանաս կըստակին սըրբութեան :  
Առաքես զհողի քո ի մարդիկ նանրակրօն  
Հըրաշապանձ հաստատել Քրիստոսեան ըզպաշտօն .  
Ի խնդիր ելանես սառնասոյզ ի վայրի  
Կորուսեալ զազդ ողջոյն տաւաղել 'ի յերկնի :  
Քոյդ անուն է գովեալ մեծազօր և արդար,  
Օրնութիւն քեզ յաւերժ հըզչակեն յերկնից պար .  
Արարածք իսկ յերկրի յառաւօտ, յերեկոյ,  
Հանապազ յիւրեանց կայս գեղզեղեն զերգ սիրոյ : (Երբայ) :

### ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

Զարեն (գայ) :

Աւաղթըշուառ ճակառագրին յոր հիքարար մատնեցաք,  
Զի կրօն ումպէտ ուամիկըսպաս ունի զորեարն ի սպասեակ .  
Խրուտ տատասկ փուշ ընձիւղեալ խափան յառնէ դալարեաց,  
Մինչև խեղդէ ըզպոյս համայն, զի չիք ինքեան դիմակաց:  
Այսպէս Ցըրգատ վատթարամիտ՝ դից մոռացեալ ըզվըրէք,  
Անսանձ թափով սուր յանխընայ հարու ըզմեզ, զընէ գէշ.  
Ուր բազմարոյլ տարափէ նետից, սւր կայծակունք հրածորան,  
Զի դանդաղիք՝ գուապք ոչ ընդվուղելոց ի վերայն :  
Թէ պակասեաց ոյժ աստուածոց, ոյժ բընածին արութեան,  
Անիծեալ, օն, արարիչ և արարածք անպիտան .  
Թէ զօրեղք են, շանթիք հարցեն ըզգօրութիւն թըշնամեաց,  
Զի անսաստեալք յընչաց քերեն ժըխտեալթէ դիք չեն աստուած :  
Սակայն զի փոյթ նընչեն նորա քուն անյարիր յաւիտեան,  
Կորեաւ, կորեաւ չըքնաղ ուսումն և մոգութիւն զրագաշտեան .  
Այսուհետեւ թող հանգիցեն դիք, զիցուհիք յաւիտեան,  
Կորեաւ, կորեաւ չըքնաղ ուսումն և մոգութիւն զրագաշտեան :  
Յաշացս հերձ հերձ  
Արեամբ հանդերձ  
Կենացս անգին  
Առուք վիժին : (Հանդարտեալ ապա յարէ) :

Վէս Գրիգորսյ տրորեացի գող անզերծ մատնեալի վըտանդ  
Զի այլ յըխորտ դայ ի վէջ, բաւ կեշտ մեր եղև նըշաւակ .  
Վաստակք նորին յոչին գրեային , բարձիս եղև դաւադիր ,  
Ընապթորմի անդամք մարմնոյն ընդ քարշ ածցին ընդ երկիր .  
Զարքայն վայրագ տարցեն ճիւազք ծըծըմբավառ ի կայան ,  
Արդար վրճառաւ քըրմապետիս ըզվրէժ լուծեալ կրից ցասման .  
Զի այլ ժուժամ , խանգար լիցին համանգամնոյն տիեզերք ,  
Արեւ , լուսին անկցին յերկրէ , խաւար լիցի երկուստեք :  
Թըմբեալ ուժգին դըղորդեսցին աստղունք բոլոր և ամպրոպք ,  
Լիով կարկուտ ի Յարդգողէն թօթափեսցի մեծատրոփ .  
Նետք բոցավառ յաւիտենից մէտ մէտ լարեալ տեղասցին ,  
Յորդ յորդ սահանք ողողեսցեն զաշխարհագունտն ահագին : (Երբայ) :

### ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՕՏԱՑ. ԱՐՏԱԿԱԶԴԻ. ՍՄԲԱՏ. ՏԱԶԱՏ. ԳՐԻԳՈՐ. ՏՐԴԱՏ

#### Օտայ

Ուրախացէր , Հայութիւն ,  
Հաշտիւ սըրբոց վըկայից  
Ընդ դըմութիւն բարձրելոյն .  
Դարձեալ չնորհիւ կրօն յանրիծ  
Եկեալ լուսով փըրկութեան ,  
Մըթար մեղացըն լուծաւ .  
Պայծառացիր , Հայաստան ,  
Յայդ յիշատակ քաջալաւ :

#### Արտաշազդ

Ցընծաւ և դու աւետեզք  
Լեառն Մասիս բարձրաճնմ  
Յազատութեանս գործ յամբոկ  
Զի վերացաւ սուդ դըժխեմ:  
Ի քո գագաթն ամայի  
Առատ հեղցի ի բարձանց  
Ցօղ օրհնութեան արփենի  
Խնամակալին պարգևաց :

#### Սմբատ

Ընդ քեզ Աստուած հաճեցաւ ,  
Այն որ չունի իւր սահման .

Ի միջի քում կեայ անձկաւ  
Այսուհետև յաւիտեան :  
Նորոգելով յազդէ յազդ  
Ի ցընծութեան ծիրանի .  
Տաճար եղեր և ըլնակ  
Խաչապրսակ արքայի :

### Տաժառ

Խորտակելով յաւերած  
Զանուր գերւոյ երկաթի  
Զոր կեղծ սիրողն հայրենեաց  
Ի պարանոցդ արկ հաստի :  
Ո՛չ ևս աղանդք ի վերջոյ  
Բուցին ի քեզ շարաթոյն ,  
Ո՛չ պըղծեսցի ծընունդ քո  
Ի գիցային պիղծ անուն :

### Գրիգոր

Մըկըրտութեան աւազան  
Ի քեզ կանգնեալ սըրբարար  
Փոխան քըրմաց պաշտաման  
Օրինադրի գերափառ :  
Ժողովեսցին աստ համայն  
Մաքուր սերունդք արգանդի ,  
Օրհնել ըզծէր միարան  
Ի ձայն երգոց տասնաղի :

### Տրդառ

Թաւէրժ երգէ լու ի լու .  
Գահաւորակ ալքունեան  
Թէ Գրիգորն է լուսատու  
Հայաստանեայց փրկութեան :  
Աստ երկնաւոր նահատակն  
Ի քիրտն արեան աշխատեալ  
Նազեաց ի սիրտս բովանդակ  
Ըզլոյս կրօնին երկնափայլ :

ԵՐՊ.

Բանակն

Բաղդ ունի Հայն յԵղեմն անդոյր  
 Առ նորին շուք տեղայ ողորմ  
 Ղօղեալ խաւար մառախապատ .  
 Դարք տանեն զօրս ի Հայաստան ,  
 Ուխտէ խաչին ղապագայ իւր ,  
 Ի' իւսիւք ծաղկանց պըսակ ի գլուխ  
 Նազի աշխարհս հաշտ ակնարկեալ  
 և յանդրանիկն յԱղդ և ի կրօն . (Զգի վարագոյր տեսարանին) :

ԳԵՐՁ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ

ԲԱՋԴՈՒԽ \*

Ի ՎՃԱՆԻ ՄԱՀՈՒ ՆԱԲՈԼԷՈՆԻ Դ

Շոյտ , քաջազարմ , փախիր ... Զուլեանք արշաւեն : —  
 Բաղդախընդիր նա գեղեցի ապազէն .  
 Բիւրաւորաց սիրտք բարախեն ի բացուստ .  
 Հայրենիք իւր և ծնող ի զնին կան անդուստ : —  
 Աւաղ ճետին Պոնաբարդեան անձնամատ ,  
 Արտօսր հեղում վասն արևուդ տարաբազդ .  
 Շեշտեաց ըզտէգան ի լանջն՝ անդութ թընամին ,  
 Ըզդիշերաւ լայ գքեզ լուսին ի գաշտին :  
 Անուանակցիդ նըման՝ քըսան և երիս  
 Ամըս կընքեալ յընթացս բարեաց անձկալիս ,  
 Լացցեն ըզքեզ՝ որչափ սեպուհք են յաստիս :  
 Ո՞վ քոյին մօր արձանասցի մըխիթար .  
 Ո՞վ զկալիս ըսկոփեացէ յուսաբեկ .  
 Պոնաբարդեանց այս է վախճան վայրապար :

ՆՈՅՆ

\* Ծանուցանեմք զի երկասիրող Թամարերգութեան և նուագին որ ՚ի ստորեւ , և Տէր Մեռ-  
 ըովզ Ֆր . վարդապետ Ուղուղընան , յորը զընեալ անուամբ Բաղդունի . և զի առ ՚ի հաճել ևեթ  
 ՇՊատ . մատենադիրն , յանձն առաք հրատարակել ղաւաքեալն առ մեզ :